725

1. Ծաղիկներն են, որ պարտեզին կտան
Գեղեցկություն, բույր և տեսք աննման:
Հիսուս Փրկիչն Իր ձեռով փրկարար
Մանուկ ծաղիկ էր պահում անհամար:

Հիսուսի պահած մանուկներն արդար
Թող միայն ապրեն Հիսուսի համար,
Հիսուսի համար թող որ մեծանան,
Աստծուն պաշտող զավակներ դառնան:

2. Չքնաղ պարտեզը ծաղկել է արդեն,
Փշերը վարդից զատվել են արդեն,
Մանուկ վարդերը թող ապրեն արդար,
Ապրեն ու գործեն Հիսուսի համար:

3. Հիսուսն է սիրով խնամում նրանց,
Մաքրում, ոռոգում, աճեցնում նրանց,
Հիսուսի այգում մանուկ դու աճած,
Բացվիր ու բուրիր՝ խոնարհվելով ցած:

4. Եվ այդ պարտեզը, ծաղկեփունջ դարձած,
Թող փառաբանի Հիսուսին փառաց,
Հիշե՛ք, Հիսուսն է ձեզ հովանի,
Փափագում է, որ ձեզ Իր մոտ տանի:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025